Հավելված N 2
2026 թվականի փետրվարի 10-ին կնքված
1032-11002/2026-ԱՀՄՏ5 պայմանագրի

## ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

### 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 5. Գեղարքունիք, Կոտայք (մասնագիտացված) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.02.2026-31.12.2026թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2026 -30.06.2026թթ. |
| Ներկայացման օր | 03.07.2026թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2026.08.06
10:32:41 AMT

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար սահմանված են հետևյալ գործողությունները.
- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակացության տրամադրում,
- բժշկական օգնության տրամադրում,
- կենցաղային սպասարկման աջակցության տրամադրում,

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակացության տրամադրման** շրջանակներում սոցիալական աշխատողը տունայցերի միջոցով աջակցություն է տրամադրել Գեղարքունիքի մարզի Ճամբարակ և Սևան, Կոտայքի մարզի Հրազդան և Չարենցավան համայնքների 23 շահառուի: Կարիքների գնահատման և վերագնահատման արդյունքում կազմվել են շահառուների անհատական ծրագրերը, որոնց հիման վրա էլ տրամադրվել են համապատասխան ծառայությունները:
  Սոցիալական աշխատողի կողմից աշխատանքներ են իրականացվում շահառուների սոցիալական կարողությունների, ինքնուրույն կենցաղավարման հմտությունների զարգացման ուղղությամբ:
  Սոցիալական աշխատողի անմիջական միջամտությամբ 2 շահառուի համար սննդային աջակցություն է տրամադրվել համայնքապետարանի կողմից:
  Հաշվետու ժամանակահատվածում հոգեբանական խորհրդատվություն է ստացել թվով 1 շահառու, ևս 1 շահառուի հետ իրականացվել է շարունակական հոգեբանական անհատական աշխատանք:
  **Խորհրդատվական օգնության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից պարբերաբար իրականացվում է շահառուների իրազեկում իրենց իրավունքների մասին՝ յուրաքանչյուրին իրեն հասանելի տարբերակով:
  **Ժամանցի կազմակերպում**. Աշխատանքներ են իրականացվել շահառուների հետաքրքրությունների բացահատման ուղղությամբ և ինտեգրման նպատակով փորձեր են արվել վերջիններիս ներգրավել համայնքային մշակութային միջոցառումներին, ցանկության դեպքում կազմակերպվել է նրանց մասնակցությունը ցերերեկային կենտրոններում գործող խմբակներին, էքսկուրսիաներին:
  Հաշվետու ժամանակահատվածում 2 շահառու մասնակցել են Հրազդանի ցերեկային կենտրոնում գործող խմբակներին, մասնակցել մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերին:

- **Բժշկական օգնության** տրամադրման շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում 23 շահառու բժշկական աջակցություն է ստացել, որը հիմնականում ներառել է զարկերակային ճնշման չափում, գլյուկոմետրիա, դեղորայքի մշտադիտարկում և ստացման հարցում աջակցություն, առկա առողջապահական խնդիրների քննարկում և խորհրդատվություն:
  Դեղորայքի մշտադիտարկումը ներառել է դեղորայքի պիտանելիության ժամկետների ստուգում, հոգեմետ դեղորայքի ընդունման ժամկետների վերահսկում, ինչպես նաև դեղորայքի վերաբերյալ խորհրդատվություն: Հաշվետու ժամանակահատվածում բուժքույրերի կողմից

իրականացվել է հոգեբույժի կողմից նշանակված դեղորայքի ճիշտ ժամանակացույցով ընդունման մշտադիտարկում 4 շահառուի համար, 1 շահառուի համար կազմակերպվել է տեղամասային պոլիկլինիկայի թերապևտի տնային կանչ, 1 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում պոլիկլինիկայից և բժշկական կենտրոնից ձեռք է բերվել անվճար դեղորայք, 2 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա:

- **Կենցաղային սպասարկման** աջակցման շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 23 շահառուի: Սոցիալական սպասարկողների կողմից կերակրի պատրաստման հարցերում աջակցություն է տրամադրվել 5 շահառուի, անձնական հիգիենայի պահպանման (մարմնի մասնակի լվացման, լոգանքի, ինքնախնամքի և այլն) հարցերում աջակցություն է ստացել 3 շահառու, 10 շահառուի համար իրականացվել են բնակարանի մաքրման աշխատանքներ, 6 շահառուի համար կատարվել են գնումներ:
  Հաշվետու ժամանակահատվածում տրամադրվող ծառայությունների արդյունքում աշխատակիցները վստահություն են ձեռք բերել շահառուների շրջանում, իսկ շահառուների մոտ վերականգնվել է ինքնավստահությունը, ծառայությունների շնորհիվ նրանք ներգրավվել են տնային մաքրության և ինքնախնամքի կազմակերպման գործընթացում:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.
Արտ-թերապիայի խմբակ(տե՛ս հետևյալ հղմամբ ՝https://surl.li/dwhrbo):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակացության տրամադրում,
- բժշկական օգնության տրամադրում,
- կենցաղային սպասարկման աջակցության տրամադրում,

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- Յուրաքանչյուր համայնքում կենտրոնների պատասխանատուներն ու սոցիալական աշխատողները ՄՍԾ տարածքային կենտրոննրում մասնակցել են համակարգող խորհրդի նիստերին և ֆորումներին:
- Ծառայություններ մատուցող թիմերի պատասխանատուները մասնակցել են հոգեբույժ Գ. Փաշիկյանի վարած՝ «Հոգեկան առողջություն» թեմայով առցանց հանդիպմանը:
- Սոցիալական աշխատողները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված «Շահառուի աջակցության փաստաթղթավորում» թեմայով

հանդիպմանը, որի ընթացքում քննարկվել են ձևաթղթերի ու հարցաթերթերի կիրառելիությունը և այդ մասով անհրաժեշտ հմտությունները:

- Սևանի և Ճամբարակի կենտրոնների պատասխանատուները, սոցիալական աշխատողները և բուժքույրերը, հոգեբանը մասնակցել են Երևանի քաղաքապետարանի ֆինանսական աջակցությամբ «Հոգեկան առողջության իրազեկման նախաձեռնություն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հուզական աջակցության թեժ գիծ» ծրագրի շրջանակներում իրականացվող առցանց տեղեկատվական հանդիպմանը, որի ընթացքում աշխատակիցներին ներկայացվել է «Հուզական աջակցության թեժ գծի» նպատակները, տրամադրվող ծառայությունները, շահառուների շրջանակը և շահառուներին ծառայությանն ուղղորդման կարգն ու լավագույն փորձը:
- Կոտայքում ծառայություններ մատուցող թիմի անդամները մասնակցել են «Հավասարության եվ մատչելիության ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց համար», «Մատչելի քաղաքացիական հաղորդակցություն ընտրական անվտանգության և կայունության համար» թեմաներով դասընթացին:
- Կոտայքում ծառայություններ մատուցող թիմի անդամները մասնակցել են «Սեռական շահագործման, բռնության, հետապնդման կանխարգելում և վարքագծի կանոնագիրք» թեմայով դասընթացին:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 22/21 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 10 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 14 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 5 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 5 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 9 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 7 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). Նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը | Ա – 2<br>Բ - 19 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 21 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 21 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 21 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | - |
| 6. | խորհրդատվական օգնություն | 10 |
| 7. | այլ ծառայություն (նշել) հոգեբանական խորհրդատվություն | 2 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «03» 07. 2026թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)